

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՋԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 26/08**

Քաղ. Երևան

29 օգոստոսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Յ.Ադամյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն № 64/2) քննարկեց «Արփիմեդ» ՀԶ ՓԲ ընկերության 2008թ. օգոստոսի 8-ին ներկայացված բողոքը «ՓԵՆԱՅԵՓԱՄ» (IR 919234) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը հայտնում է, որ Открытое акционерное общество «Целковский витаминный завод» ռուսական ընկերության «ՓԵՆԱՅԵՓԱՄ» (IR 919234) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը 2007թ. մայիսի 31-ից տարածվել է Հայաստանի Հանրապետության տարածքի վրա, այսինքն նշանը իրավական պահպանություն է ստացել ՀՀ-ում: Սակայն նրա կարծիքով «ՓԵՆԱՅԵՓԱՄ» (IR 919234) ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա կատարվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթների խախտմամբ, քանի որ երկարատև օգտագործման արդյունքում «ՓԵՆԱՅԵՓԱՄ» բառային ապրանքային նշանը կորցրել իր տարբերակող հատկությունը և համընդհանուր օգտագործման մեջ է մտել որպես հոգեներգործիչ (տրանսկվիլիզատոր) տեսակի դեղագործական ապրանքներ բնորոշող նշան:

Բողոքարկողը կարևոր է համարում նկարագրել ֆենազեպամ (Phenazepamum) դեղամիջոցի հատկությունները, նշելով, որ այն նշանակվում են տարբեր նեվրոտիկ, նեվրոզանման, պսիխոպաթիկ իրավիճակներում, որոնք ուղեկցվում են անհանգստությամբ, վախով, բարձր գրգռվողությամբ: Իր հանգստացնող (սեդատիվ), և, գլխավորապես, հակատազնապալի ազդեցությամբ ֆենազեպամը չի զիջում որոշ ներվուլետիկներին:

Միաժամանակ նա նշում է, որ Ֆենազեպամ դեղամիջոցը ԽՍՀՄ-ում ստեղծված առաջին բենզոդիազեպինային տրանսկվիլիզատորն է, որն մշակվել է 1974թ. մի խումբ խորհրդային գիտնականների կողմից և ներդրվել է 1978թ.: 1979 թվականից "PHENAZEPAMUM" (ԽՍՀՄ վկ.

64186) բառային ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները գրանցված են եղել ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի ֆարմակոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի անունով: Նույն ինստիտուտի անունով 16.01.1998թ. գրանցվել է նաև «ՓԵՆԱՅԵՊԱՄ» (ՌԴ վկ. N 160324) բառային ապրանքային նշանը ԱՃՄԴ 5-րդ դասի՝ դեղագործական պատրաստուկներ ապրանքների համար, որը և հանդիսանում է վիճարկվող IR 919234 միջազգային գրանցման բազային գրանցում:

Ռուսաստանի Արտոնագրերի և ապրանքային նշանների գործակալության Բարձրագույն արտոնագրային պալատի (այսուհետ՝ նաև Արտոնագրային պալատ) 2002թ. դեկտեմբերի 15-ի N 19/84211/50 որոշմամբ «PHENAZEPAMUM» բառային ապրանքային նշանի, իսկ 2003թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ՝ նաև «ՓԵՆԱՅԵՊԱՄ» (ՌԴ վկ. N160324) նշանի գրանցումները անվավեր են ճանաչվել, քանի որ այդ անվանումները համընդհանուր օգտագործման մեջ են մտել որպես որոշակի տեսակի ապրանքներ բնորոշող անվանումներ: Այդ որոշումները ընդունելիս Արտոնագրային պալատը հաշվի է առել այն հանգամանքը, որ ֆենազեպամ դեղամիջոցը լայնորեն օգտագործվել և օգտագործվում է տարբեր տնտեսավարող սուբյեկտների կողմից, սկզբում Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Չայաստանում, այնուհետև ՌԴ-ում (այն արտադրվում է ավելի քան 20 դեղագործական կազմակերպությունների կողմից), ինչի հետևանքով այդ ապրանքային նշանները կորցրել են իրենց հիմնական նշանակությունը՝ տարբերակել սեփականատիրոջ ապրանքները այլ անձանց նույնատիպ ապրանքներից, այսինքն նշանը կորցրել է իր տարբերակող հատկությունները: Սակայն 2004թ. օգոստոսի 19-ի որոշմամբ Մոսկվայի Միջնորդական դատարանը անվավեր է ճանաչել Արտոնագրային պալատի նշված որոշումները և NN 64186 և 160324 գրանցումների գործողությունները վերականգնվել են: 2006թ. օգոստոսի 12-ին NN 64186 և 160324 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները զիջվել են ՕԱՕ «Целковский витаминный завод» ռուսական ընկերությանը, որը ներկայումս հանդիսանում է այդ նշանների սեփականատերը Ռուսաստանում:

Ֆենազեպամ դեղամիջոցը լավ հայտնի և լայնորեն օգտագործվել և օգտագործվում է նաև Չայաստանի Չանրապետությունում, ինչպես նախկին ԽՍՀՄ օրոք, այնպես էլ առ այսօր: Դրա մասին վկայում են բողոքին կից ներկայացված տեղեկանքները, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տեղեկանքը, որում նշված է որ ֆենազեպամ դեղը լայնածավալ օգտագործման դեղամիջոց է, և 01.01.2006թ դրությամբ մասնագիտական բժշկական կիրառման առումով ունեցել է լայնածավալ օգտագործում:

Պետք է առանձնացնել նաև «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը (Է.Ս.Գաբրիելյան), որում մասնավորապես նշված է, որ «...նկատի ունենալով շարադրվածը, բժշկական ու մասնագիտական շրջանակներին լավ հայտնի լինելը, շուրջ 30 տարվա պատմությունը, մեր կարծիքով, «Ֆենազեպամ» անվանումը արդեն նույնացվում է նույնանուն տրանսկվիլիզատոր դեղի տեսակի հետ»: Ավելացնենք միայն, որ անցյալ

դարի 80-ական թվականներից սկսած ֆենազեպամ դեղը մեծ քանակություններով ներմուծվել է Հայաստան դրա տարբեր արտադրողների կողմից, և այդ բնագավառի բժիշկ մասնագետների կողմից այն ոչ մի դեպում չի կապվում ներկայումս ՀՀ-ում «ФЕНАЗЕПАМ» (IR 919234) անվանումով ապրանքային նշանի սեփականատեր՝ ОАО «Щелковский витаминный завод» ռուսական ընկերության հետ: Բացի դրանից, այս 30 տարիների ընթացքում «ֆենազեպամ» ապրանքային նշանները օգտագործվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ միայն դրանց ներկայումս սեփականատեր հանդիսացող ОАО «Щелковский витаминный завод» ռուսական ընկերության կողմից, այլ նաև այլ անձանց կողմից: «Ֆենազեպամ» դեղի արտադրությունը նշված տարիների ընթացքում զգալիորեն բարձրացել է և դա կատարվել է ի հաշիվ այլ կազմակերպությունների, որոնք օգտագործել են այդ վիճարկվող ապրանքային նշանը: Եվ վերջապես, ըստ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված մեկ այլ տեղեկանքի, «Շյելկովսկի վիտամինների գործարան» ԲԲԸ «Ֆենազեպամ» դեղը Հայաստանի Հանրապետությունում գրանցված չէ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, որոնցից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում «Ֆենազեպամ» անվանումով ապրանքային նշանը նույնպես կորցրել է իր տարբերակող հատկությունները և համընդհանուր օգտագործման մեջ է մտել որպես որոշակի տեսակի՝ այն է, հոգեներգործիչ դեղի տեսակների ապրանքներ բնորոշող նշան, բողոքարկողը՝ «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ-ն համարում է, որ «ФЕНАЗЕПАМ» (IR 919234) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա կատարվել է օրենքի 11-րդ հոդվածի 1-ն մասի «ա» ենթակետի դրույթների խախտմամբ և, ղեկավարվելով նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, ինդրում են անվավեր ճանաչել «ФЕНАЗЕПАМ» (IR 919234) բառային ապրանքային նշանի գրանցումը

Բողոքին կից ներկայացվել են՝

1. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 01.08.08 թիվ 0403183108 տեղեկանքի պատճենը.
2. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 08.08.08 թիվ 0101041308 տեղեկանքի պատճենը.
3. ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 28.07.08 թիվ 310 տեղեկանքի պատճենը.
4. ՀՀ Արարատի մարզի «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 25.07.08 թիվ 016 տեղեկանքի պատճենը.
5. ՀՀ Արարատի մարզի «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 28.07.08 թիվ 27 տեղեկանքի պատճենը.
6. ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 28.07.08 թիվ 62 տեղեկանքի պատճենը.

7. ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի հոգեբուժական կլինիկայի 28.07.08 թիվ 01251971 տեղեկանքի պատճենը:

«ФЕНАЗЕПАМ» (IR 919234) ապրանքային նշանի սեփականատեր Открытое акционерное общество «Щелковский витаминный завод» ռուսական ընկերությունը՝ սահմանված կարգով (ինչպես անմիջականորեն, այնպես էլ ներկայացուցչի միջոցով) ծանուցված լինելով բողոքի նյութերին, 2008թ. օգոստոսի 28-ին իր ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի միջոցով բողոքարկման խորհուրդ առարկություն է ներկայացրել՝ 2008թ. օգոստոսի 8-ին գործակալության բողոքարկման խորհուրդ «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ:

Ա.Գալոյանը հայտնում է, որ իր վստահորդը՝ ОАО «Щелковский витаминный завод» ռուսական ընկերությունը, համաձայն չէ բողոքում բերված փաստարկների հետ, քանի որ՝

1. Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ ծագել է «ФЕНАЗЕПАМ» (IR 919234) ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը, ապացուցվել է այն փաստը, որ այդ ապրանքային նշանն ունի տարբերակող հատկություն:

2. ОАО «Щелковский витаминный завод» ռուսական ընկերությունը, 2006թ.-ի, օգոստոսի 12-ից հանդիսանում է «ФЕНАЗЕПАМ» ապրանքային նշանի սեփականատերը, ուստի, Ա.Գալոյանի կարծիքով, չէր կարող մինչ այդ օգտագործել այդ ապրանքային նշանը, քանի որ դա խախտում է նախկին սեփականատիրոջ իրավունքները:

3. Ա.Գալոյանը հատուկ նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանների գրանցման վերաբերյալ որոշումները կայացնում է ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը:

4. Եվ, վերջապես, Ա.Գալոյանի համոզմամբ, «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ-ի բողոքում նշված կազմակերպությունները աջակցել և աջակցում են այդ ապրանքանիշով ապրանքների կեղծմանը և ապօրինի ներմուծմանը Հայաստանի Հանրապետության տարածք՝ տեղյակ լինելով, որ որոշ կազմակերպությունները չունեն իրավատիրոջ թույլտվություն:

Առարկությանը կից ներկայացվել է ОАО «Щелковский витаминный завод» ընկերության կողմից ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի անունով տրված լիազորագիրը:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է հետևյալը:

Ս.թ. օգոստոսի 8-ին «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ կողմից ստացվել բողոք «ФЕНАЗЕПАМ» (IR 919234) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 5-րդ դասի «դեղագործական պատրաստուկներ» ապրանքների համար անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքին կից ներկայացվել են թվով 7 տեղեկանքներ ՀՀ-ում մասնագիտացված մի շարք հոգեբուժական բժշկական կենտրոններից, որոնք օգտագործում են նույնանուն ՓԵՆԱՅԵՊԱՄ դեղամիջոցը, այդ թվում նաև ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տեղեկանքը և «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ընկերության երկու տեղեկանքները:

Ներկայացված փաստաթղթերից հետևում է, որ Ֆենագեպամ դեղամիջոցը լավ հայտնի և լայնորեն օգտագործվել և օգտագործվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նախկին ԽՍՀՄ օրոք, այնպես էլ առ այսօր: Կոլեգիան հատուկ առանձնացնում է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի 7-րդ կետը, որն, ի դեպ, ստորագրված է այդ ոլորտում հանրապետությունում ճանաչված հեղինակության՝ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի կողմից, ում կարծիքով ֆենագեպամ անվանումը արդեն նույնացվում է նույնանուն տրանսկվիլիզատոր դեղի տեսակի հետ, նկատի ունենալով բժշկական և մասնագիտական շրջանակներին լավ հայտնի լինելը և դրա շուրջ 30 տարվա պատմությունը:

«Щелковский витаминный завод» ընկերության ներկայացուցչի բերված նկատառումներից երկուսի հետ (2-րդ և 3-րդ կետեր) չի կարելի չհամաձայնվել, քանի որ դրանք անհերքելի են: Ինչ վերաբերում է նկատառումների 1-ին կետում բերված հիմնավորմանը, համաձայն որի Ռուսաստանի Դաշնությունում «ՓԵՆԱՅԵՊԱՄ» (IR 919234) ապրանքային նշանն ունի տարբերակող հատկություն, ապա այն չի կարող որևէ իրավական հետևանք ունենալ, քանի որ բողոքարկման խորհուրդը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ տվյալ դեպքում՝ նաև ՀՀ-ում ճանաչված մասնագետների և մասնագիտացված կազմակերպությունների եզրակացություններով:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները բողոքարկման խորհուրդը եկավ հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը, հաշվի առնելով ՀՀ-ում մասնագիտացված բժշկական կենտրոնների կարծիքը, ինչպես նաև այդ ոլորտում հանրապետությունում ճանաչված մասնագետների եզրակացությունը, գտավ, որ «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ կողմից բողոքում ներկայացված փաստարկն առ այն, որ «ՓԵՆԱՅԵՊԱՄ» (IR 919234) ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետության տարածքի վրա կատարվել է օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթների խախտմամբ հիմնավորված է, քանի որ տարբեր ընկերությունների կողմից երկարատև օգտագործման արդյունքում «ՓԵՆԱՅԵՊԱՄ» բառային ապրանքային նշանը կորցրել է իր տարբերակող հատկությունը և համընդհանուր օգտագործման մեջ է մտել որպես որոշ տեսակի դեղագործական ապրանքներ բնորոշող անվանում: Այս եզրակացությունը լիովին համապատասխանում է «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման»

կարգի 90-րդ կետի 12-րդ ենթակետի դրույթներին համաձայն որոնց՝ «Համընդհանուր գործածում գտած որոշակի տեսակի ապրանքներ բնորոշող նշանների թվին են պատկանում այն նշանները, որոնք նախկինում գործածված են եղել որպես ապրանքային նշան, բայց սպառողի կողմից ընկալվում են որպես ապրանքի սեռային կամ տեսակային անվանում տարբեր արտադրողների կողմից նույն կամ նույնատիպ ապրանքների համար իրարից անկախ բազմիցս օգտագործելու պատճառով, օրինակ՝ թերմոս, վազելին, ցելոֆամ, նովոկային, լինոլեում և այլն»:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Արփիմեդ» ՀԶ ՓԲԸ-ի բողոքը ամբողջովին և “ФЕHA3EПAM” (IR 919234) բառային ապրանքային նշանի գգրանցումըն ամբողջովին անվավեր ճանաչել ՀՀ տարածքում:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան